# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԳ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 31 մայիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի ԱԳ փոխնախարար Դմիտրի Տկաչին՝ երկու երկրների դեսպաններ Ալեքսանդր Բոժկոյի և Հրաչ Սիլվանյանի ընկերակցությամբ:

Նորին Սրբությունը հյուրին ծանոթացրեց Հայ Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր, կրթական և բարեսիրական գործունեությանը, կարևորեց Եկեղեցու այն հիմնական առաքելությունը, Հայաստանի հետ փարբեր երկրների, այդ թվում՝ նախկին խորհրդային հանրապետությունների ջերմ ու եղբայրական կապերը, մասնավորապես նշելով հայ-ուկրաինական պատմական բարեկամությունը: